

ՄԱՐՏԻՐՈՍ ԱԼԹՈՒՆԵԱՆ

Որքան տաղանդաւոր, նոյնքան համեստ ու բազմակողմանի այս արուեստագէտը, հազուադէպ ճիշդ մըն է իր նմաններու կարգին: Ճարտարապետ, նկարիչ եւ ֆանդակագործ միանգամայն, ան իր վրայ կը միացնէ հայ արուեստի եւ սեղծագործութեան երբեակ բնորոշ երեսները:

Հոս, ֆաղսֆակրթութեան եւ արուեստի այս ուսանին մէջ, կ'առաջնորդէ ժ. դարու Ֆրանսական նկարչութեան յայտնի դիմերէն Cormon-ի J. P. Laurens-ի եւ Bonnat-ի: Ուրեմն Մ. Ալթունեանի արուեստին հիմքը կը կերպարանաւորուի, այս երեք արուեստագէտներու շուրջին սակ: J. P. Laurens-էն եւ Cormon-էն ստիպեցաւ պատմական տարմանը սեղծելու սերը, Bonnat-էն անոնց նկարագիրները տալու ուժը: Այս երջանին Փարիզի գեղարուեստական երջանակին մէջ վերոյիշեալ նկարիչները կը համարուէին



ԵՆ Ի ՎԻՐԱԿԵՆ

Մ. Ալթունեան ծնած է 1888ին Պրուսա. իր նախնական կրթութիւնը ստանալէն յետոյ բնակավայրին հայ եւ օսար վարժարաններու մէջ, զացած է Փարիզ, L'école des Beaux Arts-ի գեղարուեստական վարժարանին մէջ հետեւելու ճարտարապետութեան, նկարչութեան եւ ֆանդակագործութեան:

Ուր միջումներու հակադրեցիկ համբաւներ, որոնց գործերուն մէջ իրապատեւութիւնն ու վիպապատեւութիւնը յաջող ու երջանիկ համադրութիւններով կը միանային, առանց զոհելու իրականութեան շնորհն ու զեղեցկութիւն, եւ միտնուելու միւս կողմէն վիպական փայտ իրազանցութեան մէջ:

Փարիզ, այդ օրերուն, ինչպէս այսօր, ձեռք լապտեր մը, կը սպասէր ակնապիւծ հորիզոնին վրայ, որպէսզի ուր որ արուեստի նորութիւն մը ծագէր, անմիջապէս իւրացնէր զայն:

1890ին Փարիզի մէջ, Մանէյով, Դյու Մոնէյով, Ռեյնուարով ծնունդ առած սպաւորապատէ գպրոցը արդէն իր երիտասարդական բափր կորսնցուցած՝ մասամբ կ'որոնար հինը:

Ալթունեանի գոյներուն վառ արտայայտութիւնը կուգայ սպաւորապատէներէ, առ-

նասիրութենէն աւելի, հակազդեցութիւնն էր իտալական ժամանակի միթոլոժիք ձգտումին, կարենալ ստեղծելու համար մէկ կողմէն պատմական տրամներ եւ միւս կողմէն անոնց փոխանցել ոգեղէն ու կրօնական մթնոլորտ մը: Ահա թէ ինչպէս իրապատեցութիւնն ու վիպապատեցութիւնը իրարու հետ ներձուլուած, զերծ կը մնային, թէ ժամանակի արտադրանքներէն են թէ միթոլոժիք ծայրամասութիւններէն: Հոս առիւծը կանաչ չէր ներկուէր, ոչ ալ ձին օդին մէջ կը սաւառներ: Ալթունեանի մօտ նկարի մը composition-ը կը մնայ



Տրդատ Բագաւորի եւ հազարաւորներու մկրտութիւնը Եփրատ գետի մէջ

կայն ան կը կատարէ այդ աշխատանքը միապաղաղ մակարդակի մը վրայ, որ շեքային է, այսինքն բնութեան համայնապատկերներ ստեղծելու փոխարէն, կը միտէ պատմական տրամներու խորքի բացման, զանոնք լուսաւորելու աշխատանքին:

Յետոյ պէտք չէ մոռնալ որ Տպաւորապատէութիւնը իր խորքին մէջ զուտ ազգայնական շարժում մըն էր, լոյսի եւ գոյներու ուսում-

իր ամենաեական եւ աշխարհու առաքինութիւններէն մին:

Մեր շաւ մը տարեց նկարիչները Եւրոպական արուեստը ընդօրինակողներ են, ուրոնք ոչ մէկ տարր կը բերեն իրենց երկրի տունէն, ու նմուշներ սակն են արեւմտեան թէքնիքին:

Տակաւին մինչեւ երեկ ապերախս նկար մըն էր հայ արուեստը, ենթակայ հետազո-

սուրբանց եւ որոնումներու: Հայ արուեստագէտն անգամ կորսնցուցած իր ցեղային սեղծագործութեան նկարագիրը, կը խառնափէր ուրիշ ժողովուրդներու արուեստի հետքերուն վրայ:

Մեր տաղանդները դարերով կաղապարուեցան օտար արուեստի տոիւփներով: Պաշտօններ պալատներ փռեցին սուլթաններու մայրաքաղաքին մէջ, Եւրոպական ոնով: Չուհանեան գոհարներ սեղծեց, ձեւելով զանոնք Արեւմտեան արուեստի վրայ: Այլազովափին դասուեցաւ ռուս նկարիչներու

քելերովը կը մտածէ ու կը զգայ իբրեւ հայ: Այս իրողութիւնը կ'արտաբերէ իր նկարներու շարակարգութիւններէն աւելի՝ անոնց պայմանաւորած մրցութիւններէն, իբրեւ զգացումի մը հեղանիւքուած կարելիութիւն եւ շնորհ:

1919ին Մ. Ալբունեան Պէյրութ կուգար իբրեւ Ֆրանսական կառավարութեան նախարար: Եւրոպական կառավարութեան համարապետ, ապա վարիչը Լիբանանի կառավարութեան հանրային սպասարկութեան նիւղին: Լիբանանի հանրային եւ պետական հաստատութիւններու եւ շէնքերու մեծ մասին փլանները ինք պատրաստած եւ իրագոր-



Էջմիածնի կաթողիկէին շինութիւնը համաձայն Լուսաւորչի տեսլիքին

ծարքը: Բոլոր այս հայ տաղանդներուն պակասեցաւ Հայ Ոգին:

Մ. Ալբունեանի նախնադասական ու նկարչական գործերուն մէջ կայ հայեցի ունին բնադրուել այդ ոգին: Հակառակ օտար իր դաստիարակութեանը, ու արուեստի բեկնիքին, անիկա իր տաղանդին բոլոր մանրա-

ծել տուած է. իր տարիներու շնորհ եւ արդիւնաւոր ծառայութիւններուն համար ընդունելով Լիբանանի կառավարութեան պատուի պսակաւոր մետալը:

Այս օրջանին Ալբունեան չէ մոռցած նաեւ կիրարկելու իր նկարիչի տաղանդը, մասնակցելով ամերիկեան եւ Ֆրանսական նկար-

չափան ցուցանողներու եւ ստացած շնորհներ: Իր կողմէն պատրաստուած են Լիբանանի կառավարութեան բոլոր շնորհներու եւ հնչիւն դրամներու մոտեցնելը:

Իբրեւ հարստապետ մեծ համբաւ ունի, մասնաւորաբար Լիբանանի եւ Սիրիոյ մէջ: Շնորհ վիճակներ եւ հարստապետական շնորհներու շնորհներու ներկայացնող շատ մը ուսագրաւ շնորհներ իր հարստապետի տաղանդին ու հաշիւին արդիւններն են, կառուցուած կամ իր յատկապիծներով եւ կամ իր թելադրութեանց համեմատ պատրաստուած ծրագիր-

ներ, եկեղեցիներու տաճարներու տաճարներ:

Նորոգած ու վերակառուցած է, իր երիտասարդ տներուն եւ յետոյ, բազմաթիւ մզկիթներ եւ եկեղեցիներ: Այս տեսակետով իր վերջին գլուխ գործոցը պիտի հանդիսանայ անտարակոյս, Հարիսայի մեծ եկեղեցին եւ վանքը, յոյն կաթողիկոսներու կողմէն կառուցուելու ձեռնարկուած:

Իր գործն է նոյնպէս Անթիլիասի կաթողիկոսարանին Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցին, եւ նոյն տաճարի պատերը զար-



Խաչին գիւղի վարագայ լեռան վրայ

ներով: Աւելին՝ շնորհիւ իր պատրաստութեան յաջողութեան հաշիւներով հարստապետութեան որոշ նշաններ ձեռք բերել, կիրարկելով զանոնք համաշխարհային հաւաստակոտութեամբ յիշեալ կառույցներու մէջ: Ահա թիւնչու Ալբուսեանի կառուցած շնորհներն ու վիճակները զուարթ ըլլալով հանդերձ լուրջ

դարող բանի մը հազուագիշտ նկարներ, մասնաւորաբար Ս. Երրորդութիւն ներկայացնող պատկերներ, ուր արեւմտեան թեմերին ու արեւելեան խորագրած երեսակալութիւնը բովանդակող կուգան ու կը համաձուլուին, զծագրելէ աւելի, ուրուագրելու համար երկինքէն երկիր իջնող աստուածային խորհուրդը:

Նկեղեցական ու ազգային նկարներ գրծելու իր բացառիկ կարողությունը, ուսագրութիւնը գրաւած էր արդէն հանգուցեալ Տ. Կիւրեղ Ս. Պատրիարքին, իբրեւ միակ արուեսագէտը զլուխ հանելու Ս. Գրիգոր Լուսաւորիչ Նկեղեցիին տարիներէ ի վեր մտադրուած նկարազարդման գործը:

1944ին Մ. Ալբուսեան վանք կը հրաւիրուէր, տեղւոյն վրայ ուսումնասիրելու գրծուելիք պատկերները: Վեց ամսուան ժամանակաւառջանի մը մէջ ան կը պատրաստէր ու կը ներկայացնէր շինուելիք պատկերներու

համադրօրէն պատշաճեցնելու մատուռին հարստապետական կառոյցին, մրցութիւնն էլ լոյսին:

Կամֆէ անկախ պատճառներով պատկերներու պատրաստութեան այս գործը, հակառակ մեր ինչպէս նաեւ արուեսագէտի փափակին, ծրագրուած ժամանակէն աւելի պիտի ուշանար: Նոյն տարիներ առաջ, փոքրադիր տասներկու իւղաներկ պատկերները ամբողջացած էլ ընկուզեայ գեղակերտ օբյեկտներու մէջ զետեղուած, կը ներկայացուէին Սրբազան Պատրիարքին, որ իր կող-



Քրիստոսի խաչափայտին գերութենէն վերադարձը

ուրուագծերը, որոնք իրենց կարգին կը ներկայացուէին արուեսագէտներու ժիւռիի մը, բաղկացած Վ. Ա. Սրբուարք եւ Ռ. Վ. Համիլթոնի նման ձեռնհաս եւ յայտնի մասնագէտներէ: Համաձայն վերոյիշեալ օտար արուեսագէտներու տեղեկագրին, բարձրօրէն կը գնահատուէին եւ ըստ ամենայնի յաջողած կը նկատուէին ուրուագիծ պատկերներու յղացումն ու յորինումները, կը մնար զանոնք

մէն կ'ենթարկէր զանոնք նորէն յիշեալ զոյգ արուեսագէտներու արժեւորման, Հոս ի պատիւ նկարիչ Մ. Ալբուսեանին պէտք է ըսել թէ իր պատկերները հիացման ու գնահատութեան կ'արժանանային ոչ միայն իրենց յղացումին եւ արտայայտութեանց, այլ մանաւանդ գոյներու հաւասարակշռութեան եւ հարստ յորինումներուն համար:

Յստակ եւ ճիշդ էին իր կրօնական ըմ-

բռնումներ, ինչպես նաեւ տեղին եւ պատանձան՝ անձեռն եւ դեպքերու վերբերումները: Անոնք իրենց կեցումով ու բարձրանումով, որքան իրական նոյնքան մարդկային էին, իրենց սիրալիր լուրջ ու խոփոս նկարագրի յայտակերպումներով ստեղծելու որքան պատանձան նոյնքան կրօնական յանկուցիչ տուածներ: Վասնզի մարդերը Մ. Ալբունեանի նկարներուն մէջ, կերպրեցաւ ձեւեր ըլլալէ աւելի, նկարագրներ են, որոնք շարժելէ աւելի կը խօսին, ազդելէ աւելի կը տպուորեն:

Աւելի քան տարուան մը կ'աշայտէ աշխատանքն ընդ, Մ. Ալբունեան երկու ամիսներ առաջ կը յաջողէր իրագործել նաեւ մնացեալ հինգ մեծագիւր պատկերներ, որոնցմէ իւրաքանչիւրը շուրջ տասներկու քառակուսի մէք մեծութիւն մը կը ներկայացնէ: Անոնք եւս ընկուզենի եւ գեղազարդ շրջանակներու մէջ գեղեցիկաւ, կը զարդարեն արդէն Ս. Յարութեան մէջ մեր սեպհականութիւնը եղող Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին պատերը, վերածելով զայն Հայկական իրական բանգարանի մը, համաձայն հայ եւ օտար այցելուներու վկայութեան:

Յիշեալ հինգ մեծագիւր պատկերներէն երեքը, կը ներկայացնեն, Գրիգոր Լուսաւորիչ կեանքին գլխաւոր հանգրուանները:

ա) Ելն ի վիրապէն. բ) Տրդատ Բագաւորի եւ հազարաւորներու մկրտութիւնը Եփրատ գետի մէջ. գ) Էջմիածնի կաթողիկէին ժինութիւնը, համաձայն Լուսաւորիչ տեսիլին: Իսկ միւս երկուքը, մին Վարագայ լեռան վրայ եղող խաչին գիւտը կը պատկերացնէ ու միւսը Քրիստոսի խաչափայտին գերութենէն վերագործը կը ներկայացնէ:

Այս պատկերներու մեծատարած պատճառներուն վրայ, Պ. Ալբունեան, նկարիչն առաջ, վարձ զօրավարի մը ռազմավարութեամբ, ուր իր նախադասի տա-

ղանդը իրեն զօրավար կը կանգնի, նախ կը նուանէ պատառը, այսինքն այն մարդը որ իր յօրնումին իբրեւ կայք պիտի ծառայէ, յետոյ երեւակայութեան քափով, սակայն իրապատէ յօրնումեւ համաշխարհամբ, զայն կը լեցնէ շարժումի ելած անձեռով:

Ալբունեան իրեն յատուկ տեղերէ չունի, ինչպէս սովոր են ըսել քննադատները արուեստի գործերու պարագային, սակայն տուեալ նկարին համաձայն կը ստեղծէ անոր տեղերը: Ասիկա կերպն է արուեստի աւանդութեանց հաւատարիմ բոլոր յօրնիչներուն: Անոր համար է որ նկարը մեկելու եւ ներկայացնելու իր եղանակը չունի արտասովոր ու զարտուղի կերպեր: Նիւրը իրեն համար պատրուակ չէ, այլ անցեալ կամ ներկայ իրականութեան մը վերաբա-դրութիւնը:

Մ. Ալբունեանի արուեստը կը գործէ իրականին եւ երազին սահմաններուն վրայ: Առանց ուրանալու իրականութիւնը ան երազին կը դիմէ, պատկերացնելով իր միտքն ու հոգին անսայթափ ու պարզ, դասական ըլլալու աստիճան:

Նկարիչ ըլլալէ առաջ ան մեծ նախա-րապէս մըն է, այդ իսկ պատճառաւ իր քանդակներու սիմէթրիկ կառուցաւ է: Միւս կողմէն շնորհիւ իր վառ երեւակայութեան անցեալի ոգին վերագործող քեւեր կը բանայ իր յօրնումներուն մէջ, որ շնորհիւ գոյներու պերճախօսութեան իր կտաւները կը վերածէ խոսովիչ ու քափանցող մէկ մէկ ներշնչանքներու:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, իր հայկական ոնին մէջ բիւրեղացած, պէտք ունէր տաղանդաւոր նախադասի հայ նկարիչի մը, հայ կրօնին ու արուեստին ձայնովն ու հրաշքով հանգերձելու անոր ներքին խորհուրդը:

ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ